ԱՂԲՐԻ ՄՕՏ

Անա դիմացիս լեռները հսկայ
Ծածկել են սպիտակ նոր եկած ձիւնով
Եւ արեգակը վեր է բարձրանում
Դէպ կապոյտ գահը հեզիկ սահելով:

—Քըչ-քըչ-քըչ.
Լսւում է ձայնն աղբիւրի
Զուլալ ջուրը ցած է թափւում երգելով.
—Զընգ-զընգ-զընգ.
Հարսն է գալիս կուժն ուսին
Գլխի, կրծքի փողկապները զրնգալով.
—Դահ չու-չու.
Անա զեղջուկն առոյգ.
Մահակն ուսին էշն ու ձիերն է ջրում.
—Հօ,հօ,հօ,
Տաւարածն է եզներին
Աղբրից դէպի արձակ դաշտերը քշում.

Անցաւ մի ժամ. չկան հարսներ
Ոչ տաւարած, ոչ զեղջուկ.
Աղբիւրը դարձեալ քըչքըչում է
Միշտ երգելով կամացուկ.

Վ. Գ.